

ՄՐՑՈՒՅՔ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱԲԱՆ-ԳԻՏՆԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ

07.01.2025 19:34



ՀՀ փաստաբանների պալատը, հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» օրենքի 12-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 2023 թվականի հունվարի 13-ի թիվ 2/3-Լ որոշմամբ հաստատված «Որակավորման հանձնաժողովի ձևավորման և գործունեության» կարգի 8-րդ կետի իրավակարգավորումները, հայտարարում է ՀՀ փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի **(այսուհետ՝ նաև Հանձնաժողով)** իրավաբան-գիտնական անդամների մրցույթ:

Հանձնաժողովի իրավաբան-գիտնական անդամի թեկնածու կարող են առաջադրվել *իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող և Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունում վերջին վեց տարիների ընթացքում առնվազն երեք տարի իրավունք դասավանդած կամ գիտական հաստատությունում գիտական աշխատանք կատարած անձինք, ընդ որում արտասահմանում գիտական աստիճան ստացած անձինք պետք է ներկայացնեն լիազոր մարմնի կողմից տրված դրա համարժեքությունը հավաստող փաստաթուղթը:*

Հանձնաժողովի իրավաբան-գիտնական անդամի թեկնածություն ներկայացնելու համար Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված **բարձրագույն ուսումնական հաստատությունները** պետք է ներկայացնեն տվյալ հաստատության ղեկավարի կողմից ստորագրված **դիմում**, որում առնվազն պետք է նշվի *թեկնածուի անունը, ազգանունը, հայրանունը, հեռախոսահամարը, հասցեն և էլեկտրոնային փոստի հասցեն, հաստատությունը, որտեղ դասավանդում է թեկնածուն, դասավանդման առարկան (առարկաները) ու ժամաքանակը, ինչպես նաև թեկնածուի գրավոր համաձայնությունը Հանձնաժողովի կազմում ընգրկվելու վերաբերյալ:*

Նշված դիմումին պետք է կցվի.

- 1) թեկնածուի մեկ գունավոր լուսանկար.
- 2) անձը հաստատող փաստաթուղթ.
- 3) ինքնակենսագրական թերթիկ.
- 4) բարձրագույն իրավաբանական կրթության մասին փաստաթուղթ.

5) գիտական աստիճանի և գիտական կոչման (առկայության դեպքում) վերաբերյալ փաստաթուղթ.

6) տեղեկանք՝ վերջին վեց տարիների ընթացքում առնվազն երեք տարի իրավունք դասավանդելու կամ գիտական հաստատությունում գիտական աշխատանք կատարելու վերաբերյալ.

7) գիտական հոդվածների և գիտական աշխատանքների վերաբերյալ տեղեկություն՝ ներառյալ գիտական աշխատանքներին ծանոթանալու վերաբերյալ հղումներով կամ այդ աշխատանքների կցմամբ:

Սահմանված փաստաթղթերը կարող են ներկայացվել առձեռն՝ մուտք անելով դիմումը և կից փաստաթղթերը ՀՀ փաստաբանների պալատ (**Զաքյան փողոց 7-2 շենք, 4-րդ հարկ**), փոստով կամ ՀՀ փաստաբանների պալատի պաշտոնական էլեկտրոնային փոստին (**info@advocates.am**) ուղարկելով:

Դիմումների ներկայացման վերջնաժամկետն է՝ 2025 թվականի հունվարի 17-ը:

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```